«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.12.2022 թվականի «Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» թիվ 165-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 12-րդ կետի 4-դ ենթակետով սահմանվել է տեղական տուրքի հետևյալ դրույքաչափը՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

Այսպես, վերոգրյալից հետևում է, որ Արտակ Ռաֆիկի Պողոսյանի կողմից գովազդային վահանակ տեղադրելու համար «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանված կարգով վերջինս պետք է դիմեր համայնքի ղեկավարին այն համապատասխանեցնելու և տեղադրման թույլտվություն ստանալու համար, որի համար օրենքով սահմանված կարգով պետք է նաև վճարեր համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրք:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի նախաձեռնությամբ համայնքի ղեկավարի գրությամբ Արտակ Ռաֆիկի Պողոսյանին առաջարկվել է

ՀՀ օրենքներով և համայնքի ավագանու որոշումամբ սահմանված կարգով դիմել Վաղարշապատի համայնքապետարան և ստանալ համապատասխան թույլտվություն, որիը սակայն մնացել է անպատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանը, որ Արտակ Ռաֆիկի Պողոսյանը սույն տարվա ընթացքում չի դիմել արտաքին գովազդ տեղադրելու համար և չի կատարել տեղական տուրք վճարելու իր պարտականությունը, գտնում եմ, որ Արտակ Ռաֆիկի Պողոսյանի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 14 հասցեում գտնվող շինության /կրպակ/ վրա տեղադրված գովազդային վահանակը ապօրինի է, ուստի այն ենթակա է ապամոնտաժման:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ և 13.1-րդ հոդվաներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023թ-ի թիվ 33-Ն և 28.12.2022թ.-ի թիվ 165-Ն որոշումներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ապամոնտաժել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 14 հասցեում գտնվող շինության /կրպակ/ վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի տեղադրված արտաքին գովազդային վահանակը:
2. Ապամոնտաժման աշխատանքները հանձնարարել համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությանը:
3. Գովազդի (գովազդային վահանակի) ապամոնտաժման համար կատարված աշխատանքների դիմաց համապատասխան փոխհատուցումը /ներկայացված հաշվարկի հիման վրա/ օրենքով սահմանված կարգով ստանալ գովազդատուից (գովազդակրից):
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1865

«23» հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 93/23 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի Հմայակ Օնիկի Ստեփանյանի կողմից արտաքին գովազդային վահանակ տեղադրելու մասին, պարզեց.

Հմայակ Օնիկի Ստեփանյանը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Ավետիսյան փողոցի, թիվ 32 տուն, անձնագիր՝ AV0360717, տրված 06.08.2022թ. 057-ի կողմից, ն/ք՝ 015797012) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականություն, ինչի կապակցությամբ առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու վերաբերյալ 2023 թվականի սեպտեմբերի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի հարուցման մասին Հմայակ Օնիկի Ստեփանյանին ծանուցումն ուղարկվել և հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում /հիմք 22.09.2023թ. թիվ 5350 ծանուցում/: Վերջինիս առաջարկվել է այն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և/կամ միջոցներ չձեռնարկել գովազդային վահանակի տեղեդրման թույլտվության ստացման ուղղությամբ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հմայակ Օնիկի Ստեփանյանին ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, պնդում չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- Համայնքի ղեկավարի 22.09.2023 թվականի թիվ 5350 գրությունը:
- Արտաքին գովազդի տեղադրման լուսանկարահանման փաստաթղթերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հմայակ Օնիկի Ստեփանյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականությունը:

Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին ու պայմաններին համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանվել է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ այսուհետ Կարգ:

Մասնավորապես՝ Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա տեղադրվող (այսուհետ՝ գովազդ), տեղադրման կարգն ու պայմանները և այդ գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները:

Նույն Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գովազդը տեղադրվում է վահանակների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների (այսուհետ՝ գովազդի միջոցներ) ձևով:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է մի շարք հասկացություններ, համաձայն որի՝

գովազդ՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

գովազդատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ներկայացնում է գովազդային տեղեկություն գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման նպատակով:

գովազդակիր՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը տրամադրելով՝ համապատասխան միջոցներ, տեղաբաշխում և տարածում է գովազդը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող շինության վրա Հմայակ Օնիկի Ստեփանյանի կողմից տեղադրված է վահանակ, որը համաձայն գործում առկա լուսանկարների՝ պարունակում է <<«YOUR BUS & TRUCK», «Один звонок и мы сделаем все за вас!», ուղևորափոխադրումներ և այլն…>> գրառումները, հեռախոսահամարների տրանսպորտային միջոցների նկարներ և ուղևորափոխադրման ուղղին՝ քաղաքների անվանումներով:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից և Հմայակ Օնիկի Ստեփանյանի կրպակի մուտքի մոտ առկա գովազդային վահանակի բովանդակությունից պարզ է դառնում, որ Հմայակ Օնիկի Ստեփանյանի կողմից տեղադրված գովազդային վահանակում առկա նշումները գովազդ են, քանի որ պարունակում են

իրավաբանական անձանց, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկատվություններ, որը նախատեսված է անորոշ թվով անձանց շրջանակում տարածումն ապահովելու համար և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ, ուստի վահանակին ներկայացված տեղեկատվությունները և նշումները միանշանակ դիտարկվում է որպես գովազդ:

Այսպիսով, գտնում եմ, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող շինության վրա Հմայակ Օնիկի Ստեփանյանի կողմից տեղադրված վահանակը ակնհայտ գովազդ է:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները:

... Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենապյուների, էլեկտրապյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի համաձայն՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար վճարվում է տեղական տուրք՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-րդ կետի համաձայն՝ բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերի ընդհանուր բաժնային սեփականության վրա գովազդ, գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված համապատասխան համաձայնության առկայության դեպքում:

Իսկ Կարգի 11-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա, գովազդ տեղադրելու թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.12.2022 թվականի «Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» թիվ 165-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվել է տեղական տուրքի հետևյալ դրույքաչափը՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

Այսպես, վերոգրյալից հետևում է, որ Հմայակ Օնիկի Ստեփանյանի կողմից գովազդային վահանակ տեղադրելու համար «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանված կարգով վերջինս պետք է դիմեր համայնքի ղեկավարին այն համապատասխանեցնելու և տեղադրման թույլտվություն ստանալու համար, որի համար օրենքով սահմանված կարգով պետք է նաև վճարեր համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրք:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի նախաձեռնությամբ համայնքի ղեկավարի գրությամբ Հմայակ Օնիկի Ստեփանյանին առաջարկվել է

ՀՀ օրենքներով և համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով դիմել Վաղարշապատի համայնքապետարան և ստանալ համապատասխան թույլտվություն, որիը սակայն մնացել է անպատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանը, որ Հմայակ Օնիկի Ստեփանյանը սույն տարվա ընթացքում չի դիմել արտաքին գովազդ տեղադրելու համար և չի կատարել տեղական տուրք վճարելու իր պարտականությունը, գտնում եմ, որ Հմայակ Օնիկի Ստեփանյանի կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող շինության վրա տեղադրված գովազդային վահանակը ապօրինի է, ուստի այն ենթակա է ապամոնտաժման:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ և 13.1-րդ հոդվաներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023թ-ի թիվ 33-Ն և 28.12.2022թ.-ի թիվ 165-Ն որոշումներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ապամոնտաժել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 16 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի տեղադրված արտաքին գովազդային վահանակը:
2. Ապամոնտաժման աշխատանքները հանձնարարել համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությանը:
3. Գովազդի (գովազդային վահանակի) ապամոնտաժման համար կատարված աշխատանքների դիմաց համապատասխան փոխհատուցումը /ներկայացված հաշվարկի հիման վրա/ օրենքով սահմանված կարգով ստանալ գովազդատուից (գովազդակրից):
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1866

«23» հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 94/23 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 48 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտաքին գովազդային վահանակ տեղադրելու մասին, պարզեց.

<<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատերը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Շահումյան փողոց, թիվ 50 շենք, թիվ 9 բն.,Պետ.հաշվառման համար՝ 99.1147734, ՀՎՀՀ՝ 49717981, անձնագիր՝ AR0304077, տրված 24.05.2017թ. 057-ի կողմից) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 48 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականություն, ինչի կապակցությամբ առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու վերաբերյալ 2023 թվականի սեպտեմբերի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի հարուցման մասին <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջը ծանուցումն ուղարկվել և հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում /հիմք 22.09.2023թ. թիվ 5347 ծանուցում/: Վերջինիս առաջարկվել է այն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և/կամ միջոցներ չձեռնարկել գովազդային վահանակի տեղեդրման թույլտվության ստացման ուղղությամբ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատերը ծանուցումը և իրազեկումը ուղարկվելուց հետո, պնդում չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- Համայնքի ղեկավարի 22.09.2023 թվականի թիվ 5347 գրությունը:
- Արտաքին գովազդի տեղադրման լուսանկարահանման փաստաթղթերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

<<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 48 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց գովազդ տեղադրելու թույլտվության տեղադրել է արտաքին գովազդային վահանակ և չի կատարել տեղական տուրք վճարելու պարտականությունը:

Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին ու պայմաններին համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանվել է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները՝ այսուհետ Կարգ:

Մասնավորապես՝ Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա տեղադրվող (այսուհետ՝ գովազդ), տեղադրման կարգն ու պայմանները և այդ գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները:

Նույն Կարգի 3-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում գովազդը տեղադրվում է վահանակների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, էլեկտրոնային էկրանների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ), այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների (այսուհետ՝ գովազդի միջոցներ) ձևով:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է մի շարք հասկացություններ, համաձայն որի՝

գովազդ՝ տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

գովազդատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ներկայացնում է գովազդային տեղեկություն գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման նպատակով:

գովազդակիր՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը տրամադրելով՝ համապատասխան միջոցներ, տեղաբաշխում և տարածում է գովազդը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ արտաքին գովազդը տեղաբաշխվում է բնակավայրերում պլակատների, ազդագրերի, հայտարարությունների, վահանակների, լուսատախտակների և այլ տեխնիկական միջոցների ձևով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 48 հասցեում գտնվող շինության վրա <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված է վահանակ, որը համաձայն գործում առկա լուսանկարների՝ պարունակում է «Oriflame -----SWEDEN-----», գրառումները, իսկ «Օրիֆլեյմ Կոսմետիքս» ընկերությունը (Oriflame Cosmetics S.A.) շվեդական կոսմետիկ միջոցներ թողարկող ընկերություն է:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից և <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջ տաղավարի մուտքի մոտ առկա գովազդային վահանակի բովանդակությունից պարզ է դառնում, որ <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված գովազդային վահանակում առկա նշումները գովազդ են, քանի որ պարունակում են իրավաբանական անձի,

ապրանքի, գաղափարների կամ նախաձեռնության մասին տեղեկատվություններ, որը նախատեսված է անորոշ թվով անձանց շրջանակում տարածումն ապահովելու համար և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

<<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատերը հանդիսանալով վահանակում առակա «բրենդի» «պաշտոնական ներկայացուցիչ», այսինքն ընկերությանը պաշտոնապես իրավունք է վերապահվել ներկրել, գովազդել, վաճառել վահանակի բովանդակությունում առակա համաշխարհային ապրանքանիշի արտադրանքը՝ այդ ապրանքանիշի կողմից տրված սերտիֆիկատի և պայմանագրի հիման վրա (այլապես նշված ապրանքանիշի անվանման օգտագործումը վերջինիս կողմից անօրինական կդիտվի), ուստի վահանակին այդ ընկերության անվանումը ներկայացնելը միանշանակ դիտարկվում է որպես այդ ընկերության և դրա արտադրանքի գովազդ:

Այսպիսով, գտնում եմ, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 48 հասցեում գտնվող շինության վրա <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջ կողմից տեղադրված վահանակը ակնհայտ գովազդ է:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ պարբերությունների համաձայն՝ արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները որոշում են տեղական ինքնակառավարման մարմինները:

... Արգելվում է առանց համայնքի ղեկավարի թույլտվության և համայնքի ավագանու կողմից սահմանված գոտիներից դուրս համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենապյուների, էլեկտրապյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում արտաքին գովազդի, ինչպես նաև նախատեսված վահանակներից դուրս հայտարարությունների տեղադրումը:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի համաձայն՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար վճարվում է տեղական տուրք՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-րդ կետի համաձայն՝ բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերի ընդհանուր բաժնային սեփականության վրա գովազդ, գովազդի միջոց տեղադրելու թույլտվությունը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված համապատասխան համաձայնության առկայության դեպքում:

Իսկ Կարգի 11-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատ համայնքում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա, գովազդ տեղադրելու թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների:

Վաղարշապատ համայնքի ավագանու 28.12.2022 թվականի «Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» թիվ 165-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվել է տեղական տուրքի հետևյալ դրույքաչափը՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

Այսպես, վերոգրյալից հետևում է, որ <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջ կողմից գովազդային վահանակ տեղադրելու համար «Գովազդի մասին» ՀՀ օրենքի և Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023 թվականի թիվ 33-Ն որոշմամբ սահմանված կարգով վերջինս պետք է դիմեր համայնքի ղեկավարին այն համապատասխանեցնելու և տեղադրման թույլտվություն ստանալու համար, որի համար օրենքով սահմանված կարգով պետք է նաև վճարեր համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրք:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի նախաձեռնությամբ համայնքի ղեկավարի գրությամբ <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջը առաջարկվել է ՀՀ օրենքներով և համայնքի ավագանու որոշումամբ սահմանված կարգով դիմել Վաղարշապատի համայնքապետարան և ստանալ համապատասխան թույլտվություն, որիը սակայն մնացել է անպատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատերը սույն տարվա ընթացքում չի դիմել արտաքին գովազդ տեղադրելու համար և չի կատարել տեղական տուրք վճարելու իր պարտականությունը, գտնում եմ, որ <<Անդրանիկ Մուրադյան Սանասարի>> անհատ ձեռնարկատիրոջ կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 48 հասցեում գտնվող շինության վրա տեղադրված գովազդային վահանակը ապօրինի է, ուստի այն ենթակա է ապամոնտաժման:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ և 13.1-րդ հոդվաներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, Վաղարշապատ համայնքի ավագանու 28.04.2023թ-ի թիվ 33-Ն և 28.12.2022թ.-ի թիվ 165-Ն որոշումներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ապամոնտաժել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 48 հասցեում գտնվող շինության վրա ապօրինի՝ առանց իրավահաստատող փաստաթղթերի տեղադրված արտաքին գովազդային վահանակը:
2. Ապամոնտաժման աշխատանքները հանձնարարել համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությանը:
3. Գովազդի (գովազդային վահանակի) ապամոնտաժման համար կատարված աշխատանքների դիմաց համապատասխան փոխհատուցումը /ներկայացված հաշվարկի հիման վրա/ օրենքով սահմանված կարգով ստանալ գովազդատուից (գովազդակրից):
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 186-Ա

«23» հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՀՀ ԱՄԷՀ ԾՄՊ ԳՀԱՇՁԲ 22/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 13 «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԱՄԷՀ ԾՄՊ ԳՀԱՇՁԲ 22/2 ծածկագրով համայնքապետարանի մանկապարտեզի վերանորոգման բարեգործական ծրագրով իրականացված՝ Վաղարշապատ համայնքի թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներն ընդունելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մասը հանդիսացող հավելվածի:

2. Հանձնաժողովի կազմում ներգրավել կապալառու՝ «Դոդսե» ՍՊԸ-ի, տեխնիկական հսկողություն իրականացնող՝ «Արխինէքս» ՍՊԸ-ի, հեղինակային հասկողություն իրականացնող՝ «Նշան և որդիներ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
23 10 2023թ. թիվ 1861 որոշման

ՀՀ ԱՄԷՀ ԾՄՊ ԳՀԱՇՁԲ 22/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԹԻՎ 13 «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Միեր Մկրտչյան /համայնքի ղեկավարի տեղակալ/:

Անդամներ՝

Աննա Սողոմոնյան / թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն/,

Մարի Հակոբյան / թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ/,

Վասպուրական Դավթյան /քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ/,

Գրիշա Համազասպյան /կրթության և մշակույթի բաժնի առաջատար մասնագետ/,

Արամ Մովսեսյան /«Դոդոսե» ՍՊԸ -ի տնօրեն/,

Անդրանիկ Բախշյան /«Արխինէքս» ՍՊԸ -ի տնօրեն/,

Նշան Քեփիթյան /«Նշան և որդիներ» ՍՊԸ -ի տնօրեն/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18634

24 հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի ԴՕՍԱԱՖ ՀԿ-ի «Էջմիածնի Ավտոդպրոց» ՍՊԸ-ի տնօրեն Էդիկ Երվանդի Մկրտչյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան ԴՕՍԱԱՖ ՀԿ-ի «Էջմիածնի Ավտոդպրոց» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ թիվ 12102023-04-0092 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 05.10.2023թ. կազմված հատակագիծ և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002VRCEXPR / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Պատկանյան փողոցի թիվ 2/23 հասցեում գտնվող 0.0371հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Պատկանյան փողոցի թիվ 2/23 հասցեում գտնվող 0.0371հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 186 94

24 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Հայաստանի ԴՕՍԱԱՖ ՀԿ-ի «Էջմիածնի Ավտոդպրոց» ՍՊԸ-ի տնօրեն Էդիկ Երվանդի Մկրտչյանի դիմումը Հայաստանի ԴՕՍԱԱՖ ՀԿ-ի «Էջմիածնի Ավտոդպրոց» ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 12102023-04-0092 տրված՝ 15.02.2022թ., «Ավագ Ավագյան Գագիկի » ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 05.10.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04002VRCEXPR, 040026GME4WP/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 2/20 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ռ. Պատկանյան փողոց թիվ 2/20 շինություն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ռ. Պատկանյան փողոց թիվ 2/23 ավտոտնակ:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1874Ա

25 հոկտեմբերի 2023թ.ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 35ա տան բնակիչ՝ Գագիկ Աշոտի Սանթուրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Տիգրան Մեծի /նախկին Սպանդարյան/ փողոցի թիվ 35ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1159675 տրված՝ 26.08.2009թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002ZWJYYWH/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Տիգրան Մեծի փողոց թիվ 35/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 187/Կ

25 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 275 տան բնակիչ՝ Հռիփսիմե Հարությունի Իսպիրյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 15082023-04-0045 տրված՝ 15.08.2023թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 19.10.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04002HF7CZFC, 040029N5RYFH/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան թաղամասի թիվ 290 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա. Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 290 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ա. Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 290/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1872Ա

25 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Գարիկ Ռաֆիկի Վարդանյանի լիազորված անձ՝ Միհրան Արայի Մանուկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, 04-002-0828-0016 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 11032021-04-0018 տրված՝ 21.12.2006թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002P7EWBV8/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Զվարթնոց թաղամաս թիվ 3/2 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18734

25 հոկտեմբերի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ռոբերտ Էդուարդի Հովհաննիսյանի լիազորված անձ՝ Լիդա Ռաֆիկի Հովհաննեսովայի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 700712 տրված՝ 15.11.2001թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04081SFY94GE/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, 4-րդ փողոց թիվ 30 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18744Ա

25 հոկտեմբերի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի, Ոսկեհատ գյուղի Երիտասարդական փողոցի թիվ 4 տան բնակիչ՝ Ալիկ Սերոբի Դալլաքյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 057961 տրված՝ 16.05.2000թ., Էջմիածնի շրջանի Ոսկեհատի գյուղխորհրդի 1991-1995թթ. N4 տնտեսությունների գրքի թիվ 378 տնտեսության լուսապատճեն /«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի 19.09.2023թ. թիվ ԱՄ-1660 տեղեկանք/ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04081WQNG5TM/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, Երիտասարդական փողոց թիվ 4 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1875Ա

22 հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Երիտասարդական փողոցի թիվ 4 տան բնակիչ Ալիկ Սերոբի Դալլաքյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն, Սերոբ Ռուբենի Դալլաքյանին, Սիրվարդ Վաղարշակի Բաղունցին, Ապետնակ Սերոբի Դալլաքյանին և Մարիետա Սերոբի Դալլաքյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 16.05.2000 թ. տրված թիվ 057961 սեփականության վկայական, Էջմիածնի շրջանի Ոսկեհատի գյուղխորհրդի 1991-1995թթ. N4 տնտեսությունների գրքի թիվ 4 տնտեսության լուսապատճեն / հիմք՝ <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 19.09.2023թ. տրված թիվ Ամ-1660 տեղեկանք/, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 25.08.2023թ. կազմված հատակագիծ և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20238Q6SAV / Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Երիտասարդական փողոցի թիվ 4 հասցեում գտնվող 0.08հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 138.9քմ /արտաքին 138.9քմ, ներքին 111.6քմ/ մակերեսով բնակելի տունը և պարիսպը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Երիտասարդական փողոցի թիվ 4 հասցեում գտնվող 0.08հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 138.9քմ /արտաքին 138.9քմ, ներքին 111.6քմ/ մակերեսով բնակելի տունը և պարիսպը ճանաչել օրինական, որի համար սահմանված 167 931 / հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր երեսունմեկ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18764

25 հոկտեմբերի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Մկրտիչ Անդրանիկի Ղազարյանի լիազորված անձ՝ Դանիել Զավենի Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Վ.Մամիկոնյանի փողոցի թիվ 50ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.10.2022թ. վճիռ գործ թիվ ԱՐԴ1/1903/02/18 և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002HXMHX4C/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Վ. Մամիկոնյան փողոց թիվ 50/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 187/Ակ

25 նոյեմբերի 2023 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 71 տան բնակիչ՝ Եղիա Անդրանիկի Դաղուրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 891872 տրված՝ 01.08.2003թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04081S2SHJRE/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, 8-րդ փողոց թիվ 20 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1878Ա

25 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսրայել Օրու փողոցի թիվ 4 տան բնակիչ՝ Հովհաննես Աշոտի Սաղաթելյանի դիմումը իրեն և Մարուս Վարդգեսի Սաղաթելյանին, Եվա Աշոտի Սաղաթելյանին, Արմինե Աշոտի Սաղաթելյանին, Աննա Աշոտի Միհեյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 10102023-04-0008 տրված՝ 10.10.2023թ., «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 15.10.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04002AQJZGTR, 04002MDYVCAS/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Իսրայել Օրու /նախկին Ղարիբջանյան/ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Իսրայել Օրու փողոց թիվ 4 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Իսրայել Օրու փողոց թիվ 4/1 շինություն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1879Ա

25 հոկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 81ա տան բնակիչ՝ Օֆիկ Մայիսի Աղաջանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 81/1 և Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 81/2 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 27092023-04-0034 տրված՝ 27.09.2023թ., թիվ 05052023-04-0084 տրված՝ 05.05.2023թ., Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 19.10.2023թ. հաստատված թիվ 6560 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002LW8UX22/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 81/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 188-Ա

25 հոկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԹԻՎ 11 <<ՀԱՍՄԻԿ>>, ԹԻՎ 13 <<ԾԻԾԵՌՆԱԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ – ՆԵՐ, Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1, Ս. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ, հիմք ընդունելով 2022թ. դեկտեմբերի 28-ի երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստի <<Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2023 թվականի վարձավճարների գծով արտոնությունների մասին>> թիվ 169 որոշումը, <<Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում և <<Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում 2023 թվականի ուսման վարձերի գծով արտոնությունների մասին>> թիվ 170 որոշումը, հիմք ընդունելով Կրթության և մշակույթի բաժնի պետի 20.10.2023թ. զեկուցագիրը, ինչպես նաև հաշվի առնելով Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատողների ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

